ԿՈՂՈՊՈՒՏ ԿԸԶԸԼ-ԱՋԻԼՈ ԳՅՈՒՂԻ ՄՈՏ

Թիֆլիսի և Բորչալվի գավառների սահմանագծում, Կըզըլ-Աջիլո գյուղի մոտ, վերջերս տեղի ունեցած ավազակային հարձակման մասին այստեղ մեջ ենք բերում որոշ մանրամասներ կողոպտվածներից մեկի՝ Թիֆլիսի բնակիչ Իվան Ավետիքովի պատմածից։

Պարզվում է, որ Ալայ-բեկ Մուրսակուլովի ավազակախումբը՝ թվով 5 մարդ, երեք օր շարունակ այդ ճանապարհին սպասել է Ղափաղչի և Արախլո գյուղերի նախրապան թաթարների վերադարձին, որոնք դրանից առաջ մորթի ապրանք են տարած եղել Թիֆլիս։

Հենց որ այդ ձիավոր նախրապանները (5 մարդ) երևացել են, ավազակների ուրախությանը վերջ չի եղել, քանի որ երկար սպասելով նրանք կորցրած են եղել իրենց ծրագրածը հաջողությամբ իրագործելու հույսը։ Հենց որ նախրապանները մոտեցել են և կանգնեցվել, ավազակներից մեկն սկսել է նրանց հանդիմանել ուշանալու համար, որի պատճառով իրենք՝ ավազակները, ամեն տիպի դժվարություններ, նույնիսկ, քաղց կրելով, ստիպված երեք օր հսկել են նրանց ճանապարհը։

— Մենք,— գոռացել է ավազակներից մեկը,— միշտ հայերին ու վրացիներին ենք կողոպտում, իսկ դուք՝ թաթարներդ, մեզ ոչ մի օգուտ չեք տալիս։ Ձեր գյուղերում մեզ անգամ խմելու ջուր չեն տալիս։ Ահա այսօր այսքան մարդու բռնել ու չարչարել ենք (ցույց է տվել մյուս կողոպտվածներին) միայն ձեր պատճառով։

Այնուհետև ավազակները խուզարկել են նախրապանների գրպաններն ու հագուստները և մեկի մոտից հանել են 700 ռուբ., մյուսի գրպանից 520 ռուբ., երրորդի գրպանից 50 ռուբ.։

Մյուս բոլոր կողոպտվածները, բացառությամբ վերը հիշատակված Իվան Ավետիքովից և մի տղայից, որի ազգանունն Ավետիքովը չգիտի, եղել են Վաշլովանի, Կոդի և Եկատերինենֆելդ գյուղերից, իսկ հիշյալ տղան և Ավետիքովը երկուսն էլ Թիֆլիսից են եղել, ընդ որում առաջինին ուղեկցել է չապարը, որը նույնպես կողոպտվել է։ Տղային

ավազակներն ասել են, որ եթե հայրը քաղաքից նրանց չուղարկի 1000 ռուբ., նրան բաց չեն թողնի, բայց տեսնելով, որ տղան շատ է վախեցել, խոստացել են բաց թողնել։

Ավազակներն Ավետիքովից վերցրել են փող և 26 ռուբ. ընդհանուր արժողությամբ զանազան իրեր։ Ձիու նոր թամքը խլելով փոխարենը տվել են հին թամք։ Իսկ ձին խոտանել են ու վերադարձրել։

Ճիշտ այդպես են վարվել նրանք նաև մյուս տուժածների հետ. խլել են լավ ձիերն ու իրերը և փոխարենը տվել անպետքները՝ եթե այդպիսիք ունեցել են։ Երբեմն ոմանցից խլել են ձիերն ու իրերը և տվել նրանց, ովքեր լաց են եղել և ավելի շատ են կարիք ունեցել ձիերի կամ իրերի։ Ի վերջո, բացի, իհարկե, փողից, ավազակները վերցրել են 5 լավ ձի, շատ թամքեր և զանազան մանրունք։

Վաշլովանի գյուղի մի կողոպտված բնակիչ շատ է լաց եղել, որովհետև նրանից վերցրել են նոր չուխան և մեծ տոկոսով պարտք վերցրած 12 ռուբ.։ Դա նկատելով, մյուս տուժածները ավազակների պահեստից թռցրել են խեղճի չուխան և իրեն ծածկելով ցնցոտիներով, օգնել են դուրս պրծնել։

Ռատեվանցի մի խանութպան հարմար պահ ընտրելով, ծառայի հետ ձիով արագ հեռացել է, բայց նրա հետևից ընկած ավազակները հասցրել են ծառային բռնել, որի խուրջինի մեջ գտնվել են 35 ռուբ. տիրոջ փողերը։

Ավազակներից մի քանիսը գրագետ են եղել, նախրապանների փողերը խլելուց հետո, ստուգելու համար, կարդացել են նրանց մոտ եղած ստացականները և ըստ այդ փաստաթղթերի պահանջել խուզարկության ժամանակ չհայտնաբերված գումարները։

Ինչպես հայտնի է ավազակները կողոպտվածներին մի ամբողջ օր պահել են Կարանլըխ-դարա ձորակում։ Նրանք գերիներին թույլ չեն տվել ծուղակից դուրս գալ, նույնիսկ, ջուր խմելու համար։